պատուական ակամբք։ Իսկ այլ յիշատակարանք նորին և ազգատոհմին իւրոյ, իւրաքանչիւրքն դրոշմեալ են 'ի պատշաճաւոր տեղիս 'ի տաճարի Ս. Յակոբայ։ Ունէր նաև առանձին կալուածս 'ի Յոպպէ քաղաքի յանուն իւր, որպիսիք են, բաղանիքն և 'ի կարգս նորա կրպակք մթերանոցք, և տունք 'ի վերայ նոցա, եւ պարտէզ արտաքոյ քաղաքին, և կարգեալ էր 'ի վերայ նոցա յատուկ վերատեսուչ, եւ 'ի ձեռն նորին կառավարեալ իւրաքանչիւրամի զհաշիւն արդեանց և ծախուց նոցին առնոյր։ Այլ զկնի ժամանակաց՝ նոյն իսկ 'ի կենդանութեան նորին Սեղբոսի, յարեան ոմանք յայլազգեաց՝ իբր ժառանգ կալուածոց, և բռնացեալ 'ի վերայ նոցա յափշտակեցին զայնս։ Թէպէտ ինքն Սեղբոս բազում անգամ 'ի դատ եմուտ ընդ նոսա 'ի դատարանս Կոստանդինուպօլսի և յայտնի եղոյց զիրաւունս իւր՝ և զանտեղի վէճս և զբռնութիւնս այլազգեաց՝ որպէս յայտ առնեն բազմաթիւ դատաստանական գրեանք և Արքունի հրովարտակք, որք ցարդ պահին 'ի Ս. Աթոռն, սակայն չեղեւ հնար թափել զնոսա 'ի ձեռաց նոցին, զի տիրեցին և տիրեն մինչեւ ցայսօր ժամանակի. զի դժուարութիւնք ժամանակին և հեռաւորութիւն տեղւոյն՝ ոչ ինչ օգնեցին Ջանից և դատաստանաց Ամիրային։

Իսկ ինքն Սեղբոս Ամիրայ՝ կացեալ ժամանակս ինչ յԵրուսաղէմ, արարեալ անդ զմեծամեծ բարեգործութիւնս, և կատարեալ զուխտս իւր, դարձաւ 'ի Կոստանդինուպօլիս։ Գրիգոր Պատրիարք Ջանիւք եւ աշխատութեամբ աւարտեաց զնորոգութիւն տաճարին Ս. Յակոբայ յուրախութիւն սրտի իւրոյ։ Այլ հոգ մեծ էր նմա վասն սուրբ Փրկչի վանաց, զի այլազգիք Սիոնի նեղէին եւ տագնապէին հանապազ զմիաբանսն վասն ջրոյ։ Զի թէպէտ նոքա ունէին զմեծամեծ ջրհորս 'ի վանքն Սիոնի, այլ առ չարութեան սրտի իւրեանց՝ հակառակութեամբ առանց ժամու և ժամանակի, և երբեմն 'ի գիշերի եւս եկեալ բաղխէին զդուռն, և ստիպէին բանալ զայն և ընուլ զսափորն. և յոչ առնուլ յանձն միաբանաց՝ զայրացեալ թշնամանէին զնոսա սոսկալի հայհոյութեամբ և լուտանօք, և ձգէին զմեծամեծ քարինս 'ի ներքս, և չհանդուրժեալ միաբանաց այսպիսի յանդգնութեան նոցին, յակամայից բացեալ տա-